



Հրանտ Մաթևոսյան

Վազգեն Սարգսյանին

Սիրելի Վազգեն, անշուշտ նախարար և իհարկե գորավար.

Տասը տարի առաջ երեսնամյա գրողի քո հասակին անպայման հասու էր գրողների մեր գորությունը՝ թե առաջնորդող կերպարը մենք ենք ստեղծում, թե Քրիստոսին ավետարանիչներն են ստեղծել և ոչ հակառակը, թե

Սարգսյանին Մուրացանից ծնվեց և Վարդանը՝ Եղիշեից ու Դեմիրճյանից: Վիթխարի առաքելություն գրողի ու գրականության համար, որ դու շրջանցեցիր, սիրելի Վազգեն. պատանյակիդ խանդը և գրողիդ փառասիրությունը քեզ չպահեցին մեր նոր Ավարայրի բլուրներին - մարտադաշտ իջեցրին և դու ինքդ քեզնից ստեղծեցիր մարտիկին ու գորավարին: Այդպես չէր եղել, այդպես չի լինում, այդպես չի կարելի, դա առնվազն էգոիզմ է, այդպիսին լինել տրված է միայն եզակիներին: Այդպես շատերս կուզենայինք, բայց կաշկանդյալ մեր շարքերից ոտք առաջինը դու փոխեցիր, և առասպելի հերոսականության մշուշը նյութականացավ Վազգեն Սարգսյանիդ կերպարանքով:

Նախանձելի տարիք և նախանձելի կերպար, սիրելի Վազգեն:

Անխաթար արիությունդ տասնամյակներ հետո քեզ, անշուշտ, թույլ է տալու ժամանակի բարձունքից դիտել հերոսացումի ու անկման մեր այս օրերը և համայնապատկերի բերել չմեռնող, հառնող ժողովրդի ջանքը, քանզի կարող գրիչներից, սպրող հոգիներից ոչ ոք ունեցավ քո խիզախությունը՝ տեսնել ու իմանալ այնքան շատ, որքան դու, սիրելի գրող, ընկեր գեներալ, պարոն նախարար: